ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**<<ՉՀ-ՄՀՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

**ք. Չարենցավան** **_16_ _դեկտեմբերի_ _2019թ._**
**ժամը _10^30^_**

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Սարոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Նաիրա Թորոսյան
Արևշատ Սիմոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լևոն Վարդանյան

**1. <<ՉՀ-ՄՀՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին**

1.1 Հայտերը բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ժամը $10^{30}$-ին:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**2. Տեղեկատվություն գնվելիք ապրանքների գների և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով նախատեսված ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Ապրանքի անվանումը | Ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Բենզին, ռեգուլյար | 830000 |
| 2 | Դիզելային վառելիք | 820000 |
| 3 | Սեղմված բնական գազ | 1909500 |

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի գտնվելու վայրը (հասցեն) | Մասնակցի կապի միջոցները |
|---|---|---|---|
| 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30 | էլ. հասցեն՝ flashltdtender@gmail.com, Հեռ. (37410) 53-42-33 |
| 2 | <<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ | ք. Չարենցավան, Պարոնյան 2 | էլ. հասցեն՝ armmkoop@mail.ru, Հեռ. (093) 00-16-76 |
| 3 | <<ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> Լ(Տ)Ը | ք. Չարենցավան, Գանգրահեր տղա 1 | էլ. հասցեն՝ pauk63@rambler.ru, Հեռ. (098) 21-28-66 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**3. Տեղեկատվություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին**

3.1 <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:
3.2 <<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ-ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:
3.3 <<ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> Լ(Տ)Ը-ի կողմից հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**4. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտերի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու և ներկայացրած հիմնավորումների մասին**

4.1 <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4.2 <<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4.3 <<ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> Լ(Տ)Ը-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) լրացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես աղյուսակում բացակայում է առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողի անվանումը:

4.4 Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**5. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների մասին**

5.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ըստ որում՝ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| Չափաբաժին 1 | | | | | |
| 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | 678583.3 | 29750 | 141666.7 | 850000 |
| Չափաբաժին 2 | | | | | |
| 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | 710516.7 | 31150 | 148333.3 | 890000 |
| Չափաբաժին 3 | | | | | |
| 1 | <<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ | 1413700 | 144050 | 311550 | 1869300 |
| 2 | <<ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> Լ(Տ)Ը | 1420400 | 85224 | 301125 | 1806749 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**6. <<ՀՀ-ՄՀՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

6.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

- Մեկ աշխատանքային օրով կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել <<ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> Լ(Տ)Ը-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**7. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները**

**Հանձնաժողովի նախագահ՝** ____________ (ստորագրությունը) **Ա. Սարոյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** ____________ (ստորագրությունը) **Ն. Թորոսյան**

____________ (ստորագրությունը) **Ա. Սիմոնյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** ____________ (ստորագրությունը) **Լ. Վարդանյան**